«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

ՈՐՈՇՈՒՄ N 7/2

Կարգապահական պատասխանատվության ենթարկելու և որոշակի գործողություններ ձեռնարկելու մասին

ք. Երևան, Խանջյան 27 **08.11.2021թ.**

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և Էթիկայի կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 6-ը, հետևաբար, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 համաձայն Կոմիտեն իրավազոր է։

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կարգապահական և Էթիկայի կոմիտեն,

Քննության առնելով 2021 թվականի հոկտեմբերի 15-ին կայացած «Նոա»-«Սևան» (ՊԼ044) հանդիպման (այսուհետ՝ Հանդիպում) վերաբերյալ Կոմիտեում 23.10.2021թ. հարուցված կարգապահական վարույթի (այսուհետ՝ Կարգապահական վարույթ) նյութերը,

Նպատակ ունենալով Կարգապահական վարույթի շրջանակներում կատարելու բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն,

Հիմք ընդունելով Կանոնակարգի 3-րդ հոդվածը, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 և 4.03 կետերը, 5-րդ հոդվածի 5.01 և 5.02 կետերը, 14-րդ հոդվածի 14.01, 14.02, 14.04 կետը, 18-րդ հոդվածի 18.03 կետը, 20-րդ հոդվածը, 21-րդ հոդվածի 21.01, 21.02, 21.03 և 21.04 կետը և 28-րդ հոդվածի 28.01 և 28.04 կետերը 35-րդ հոդվածը և 38-րդ հոդվածը,

Որոշեց

1. Հաստատված համարել «Նոա» ՖԱ ՀԿ ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 41-րդ կետով՝ «Նոա» ՖԱ ՀԿ ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «նկատողություն»։
2. Հաստատված համարել «Նոա» ՖԱ ՀԿ ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 39-րդ կետով՝ «Նոա» ՖԱ ՀԿ ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 ՀՀ դրամի չափով։
3. Հաստատված համարել «Սևան» թիմի ֆուտբոլիստ Արթուր Քարտաշյանի (N13222) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 38-րդ հոդվածի 38.03 կետով, 5-րդ հոդվածի 5.02 կետով և հաշվի առնելով մեղմացուցիչ հանգամանքները «Սևան» թիմի ֆուտբոլիստ Արթուր Քարտաշյանին (N13222) որակազրկել 2 (երկու) խաղով և «Սևան» ֆուտբոլային ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով։
4. Հանդիպման ավարտից հետո տեղի ունեցած միջադեպի ժամանակ Հանդիպման գլխավոր մրցավար Արթուր Սաֆարյանի նկատմամբ բռնություն կիրառած անձ՝ Տիգրան Հակոբյանի «Սևան» ֆուտբոլային ակումբի հետ փոխկապակցվածությունը, ինչպես նաև Կանոնակարգի և ՀՖՖ այլ իրավական ակտերի տեսանկյունից վերջինիս՝ ֆուտբոլային սուբյեկտ լինելու հանգամանքը պարզելու համար համապատասխան հարցում ներկայացնել ՀՖՖ։
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Կանոնակարգի 19-րդ հոդվածի 19.01 կետով սահմանված կարգով՝ հրապարակման պահից յոթօրյա ժամկետում։

Նախագահ՝ Կարեն Հովհաննիսյան

Անդամ և քարտուղար՝ Հայկուհի Ռշտունի

Անդամներ՝ Բաբկեն Ղալոյան

Տիգրան Իսրաելյան

Արման Ալաբերքյան

Վահան Բերակչյան

Հիշեցում՝

1. **Հոդված 19. Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկումը**

   Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշումները ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել ՀՖՖ Բողոքարկման կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում, իսկ այդ դեպքում, երբ ֆուտբոլային սուբյեկտը դիմել է գործի հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 7-օրյա ժամկետը սկսում է հոսել այդ հիմքերը ստանալու պահից:

2. **Հոդված 28. Պատասխանատվության միջոցի կիրառման ընդհանուր սկզբունքները**

   28.05 Սույն կանոնակարգում ներառված՝ ֆուտբոլիստի և/կամ թիմի անձնակազմի անդամի ստացած դեղին քարտերի հետ կապված որակազրկումները (սույն կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերը) կիրառվում են առանց ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշման:

3. **Հոդված 25. Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի և ակումբի պաշտոնյաների պատասխանատվությունը**

   25.20 Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի, ակումբի պաշտոնյայի սույն կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերով սահմանված խախտումների հաշվառումը կատարում է համապատասխան ակումբը՝ առանց ՀՖՖ-ի Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշման:
   25.21 25.20 կետի պահանջները ակումբի կողմից չպահպանելը հանգեցնում է այդ ակումբի նկատմամբ կարգապահական պատժամիջոցի՝ տեխնիկական պարտություն:

4. Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցների տուգանքները սահմանված են ՀՀ Մ-18-16 առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների համար: Մ-15 և ցածր տարիքային խմբերի առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների տուգանքները և

պատժամիջոցները սահմանված են նախորդի 50%-ի չափով: Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցները սահմանվում են նաև ՀՀ Սիրողական ֆուտբոլի առաջնություններին մասնակցող սուբյեկտների համար: